# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 3

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 28.08.2017թ.-ի N 133-Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 08.09.2017թ. ժամը 12⁰⁰

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 28.08.2017թ.-ի N 133-Լ հրամանի հիման վրա համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով գնանշման հարցում ընթացակարգ, ծածկագիր՝ «ԲԷՑ–ԳՀԱՊՁԲ-17/40»

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու**

Հարություն Գնորգյան - Մատակարարման բաժնի պետ

**Անդամներ՝ ԳՊ/ԳԱ- գնահատող անձնակազմ**

Հայկ Հակոբյան - Մատակարարման բաժնի մասնագետ

Հայկ Գրիգորյան - Ցանցային գլխավոր ադմինիստրատոր

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Ռուբեն Ալբերտյան - Մատակարարման բաժնի պետի տեղակալ

*Օրակարգ՝*

*I. Միաժամանակյա բանակցությունների վարման մասին:*

*II. Հանձնաժողովի հաջորդ նիստի գումարման օրվա և ժամի հաստատման մասին:*

## I. Միաժամանակյա բանակցությունների վարման մասին:

---

(Հ.Գնորգյան)

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց և որոշեց.

1. Գնման ընթացակարգի 16-րդ և 17-րդ չափաբաժինների համար գնային առաջարկի նվազեցման նպատակով բանակցություններին մասնակցեց «Էյչ Գրուպ» ՍՊԸ -ն:
2. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի գնման ընթացակարգի 16-րդ չափաբաժնի համար վերջնական գնային առաջարկը կազմեց 32500 ՀՀ դրամ իսկ 17-րդ չափաբաժնի համար՝ 48000 ՀՀ դրամ:
3. Հանձնաժողովը «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած առաջարկը գնահատեց բավարար:
4. Գնման ընթացակարգի 1-ին, 3-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ -ին:
5. էլեկտրոնային փոստի միջոցով հարցում ուղարկել ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
6. Համակարգի միջոցով ծանուցել 1-ին տեղեր զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլէկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքերի ամբողջական նկարագիրերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:*

**IV.Հանձնաժողովի հաջորդ նիստի գումարման օրվա և ժամի հաստատման մասին:**

--------------------------------------------------------------------

(Հ.Գնորգյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ գումարել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերի ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացությունը ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրը ժամը 14:00-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հարություն Գնորգյան

Հայկ Հակոբյան

Հայկ Գրիգորյան

Ռոմեն Ալբերտյան